Թեման՝ ՄԵԴԻԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԻՆ
2-րդ դասարան

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

Դասընթացավար՝ Աննա Անտինյան
Տավուշի մարզի, Դիլիջանի մ/դ ուսուցչուհի

Դասի թեման՝ Տարվա եղանակները 2-րդ դասարան

Դասի թեման՝ Տարվա եղանակներ

Նպատակները՝

- Ձևավորել նախնական գիտելիքներ Արեգակի շուրջ Երկրի պտույտի ու նրա հետևանքների մասին:
- Զարգացնել բանավոր խոսքը
- Ձևավորել մեդիագործիքներով աշխատելու նախնական հմտություններ:
- Խթանել համագործակցային ուսումնառությունը:

Վերջնարդյունքները՝

- Ուսումնասիրելով նյութը ներկայացնի տարվա եղանակները և ստեղծի պատկերներ
- Թեմայի շրջանակում մտքերն արտահայտի պարզ ու հասկանալի
- Համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները
- Տիրապետի համացանցից օգտվելու և ՏՀՏ գործիքներ կիրառելու տարրական կանոններին

Դասի տիպ՝ ամփոփիչ

Անհրաժեշտ պարագաներ՝ գիրք, պրոեկտոր, ինքնակպչուն թղթեր, գունավոր մատիտներ

Միջառարկայական կապեր

Մայրենի, Թվային գրագիտություն , Երաժշտություն, Կերպարվեստ, Տեխնոլոգիա, Ես և շրջակա աշխարհը

Խաչվող հասկացություններ՝

- Օրինաչափություն, Պատճառ և հետևանք Փոփոխություն և զարգացում

Կարողունակություններ՝

- Լեզվական, Սովորել սովորելու, Ինքնաճանաչողական , Թվային մեդիա, Տնտեսական

Կապ ՀՊՉ-ի հետ S1 , S7, S8, S9, S10, S12, S13, S15, S28

Դասի ընթացքը

Քայլ 1. Խթանում: Ցուցադրում է բնապատկերներ տարվա բոլոր եղանակներին, սովորողները ներկայացնում են տարբերությունները:

Քայլ 2. Ուսուցիչը բացատրում է տարվա եղանակների առաջացման պատճառները

Քայլ 3. Դասարանը բաժանվում է 4 խմբի, որոնք ուսուցչի օգնությամբ իրականացնում են որոնում համացանցից, ուսումնասիրում տարվա եղանակները և ստեղծում պաստառ:

- «Գարնան զարթոնք»
- «Ամռան արև»
- «Խայտաբղետ աշուն»
- «Ճերմակ ձմեռ»



Քայլ 4. Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է տարվա եղանակը, բնության մեջ տեղի ունեցող երևույթները, անում մեջբերումներ բանաստեղծական և երաժշտական հատվածներով:

Քայլ 5. Սովորողները ներկայացնում են թեմայի շրջանակում իրենց ձեռքի աշխատանքները՝ պատրաստված կերպարվեստի և տեխնոլոգիայի դասաժամերին:

Ամփոփում. Սովորողները պատասխանում են Wordwall. Net կամ այլ ՏՀՏ գործիքով կազմված հարցաշարին:

Դասի ավարտին սովորողների պատրաստած աշխատանքերով ստեղծվում է թեմատիկ անկյուն նվիրված տարվա եղանակներին:

Օգտագործվող գրականություն

1. https://www.boonus.am/lesson/67
2.«Մեդիագրականություն» ձեռնարկ դասավանդողի համար:
3. ԿԶՆԱԿ Ուսումնական նյութեր
4. media. am կայքում զետեղված նյութերի ուսումնասիրում

Շնորհակալություն

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: